

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Մայիսի 2-ին (ապրիլի 25-ի փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 30 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր քսանվեց, աշխատանքի տեղավորման՝ չորս քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից ութին տրվել է դրական լուծում, տասնութ դիմում մերժվել է: Աշխատանքի ընդունվելու մասին դիմած չորս քաղաքացիները վերցվել են հաշվառման:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ